Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Եվրոպական Միության և Եվրոպայի խորհրդի
Գործընկերություն հանուն լավ կառավարման 2019-2022

«Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝
Հայաստանում դատական իշխանության անկախության և
արհեստավարժության ամրապնդումը» ծրագիր

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022թ. սեպտեմբեր

Սույն փաստաթուղթը ստեղծվել է ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից: Սույն փաստաթղթում ներկայացված տեսակետները որևէ պարագայում չեն կարող համարվել Եվրոպական միության և/կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետի արտահայտում:

Բովանդակություն

Հապավումների և համառոտագրությունների ցանկ 3
Նախաբան 4
Գլուխ 1. Դատավորների դերը հաշտարարության զարգացման գործում..... 5
Գլուխ 2. Դատավարության ո՞ր փուլում առաջարկել սկսել հաշտարարական գործընթաց (նշանակել հաշտարարական գործընթաց) 7
Գլուխ 3. Հաշտարարության էության պարզաբանումը..... 7
Գլուխ 4. Գործի՝ հաշտարարության համար համապատասխանության հարցը որոշելը 10
Գլուխ 5. Հաշտարարի նշանակումը 12
ՀԱՎԵԼՎԱԾ 1 14
ՀԱՎԵԼՎԱԾ 2..... 17
ՀԱՎԵԼՎԱԾ 3 25
ՀԱՎԵԼՎԱԾ 4..... 30

Հապավումների և համառոտագրությունների ցանկ

ԱԱԵՀ	Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԿՕողմեր	Դատավարությանը կամ հաշտարարությանը մասնակցող անձինք (նրանց ներկայացուցիչները)
Հաշտարար	Հաշտարարն անկախ, անկողմնակալ, գործի ելքով շահագրգռվածություն չունեցող ֆիզիկական անձ է, որը նշանակվում է կոմպետենտ ձևով հաշտարարություն իրականացնելու համար
Հաշտարարության վերաբերյալ ԱԱԵՀ ուղենիշներ	Հաշտարարության զարգացման գործիքակազմ. Հաշտարարության վերաբերյալ ԱԱԵՀ-ի ուղենիշների կիրարկման ապահովում (27.06.2018թ.)
Հաշտարարություն	Հաշտարարությունը համակարգված գործընթաց է, որի ընթացքում կողմերը (գործով հայցվորը և պատասխանողը) փորձում են լուծել իրենց միջև առկա վեճը հաշտությամբ՝ անկողմնակալ հաշտարարի օգնությամբ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Ռեեստր	ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում հրապարակված արտոնագրված հաշտարարների ռեեստր
ՔԴՕ	ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք

Նախաբան

Վերջին տասնամյակում վեճերի լուծման այլընտրանքային եղանակները արագընթաց զարգացում են ապրում ամբողջ աշխարհում, ինչը բացատրվում է նրանով, որ կողմերը ձգտում են լուծել իրենց միջև առաջացած վեճը արագ, փոխշահավետ և ընթացակարգի գաղտնիությունն ապահովելով: Վեճերի լուծման այլընտրանքային եղանակներից է հաշտարարությունը, որի ժամանակ կողմերն ազատ են հաշտարարի ընտրության հարցում և ակտիվորեն մասնակցում են իրենց վեճի լուծման ընթացքին:

Հաշտարարությունը քաղաքացիական իրավունքի համակարգ ներմուծվեց 2015 թվականին ընդունված ‹‹Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին›› ՀՀ օրենքով: Հաշտարարության գործընթացն ավելի մանրամասն կարգավորվեց 2018 թվականին ընդունված «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով: Իսկ նույն թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հաշտարարությանը վերաբերող դրույթները բարեփոխվեցին:

Թեև երկու իրավական ակտերն էլ պարունակում են կարևոր կարգավորումներ, այդուհանդերձ հաշտարարության ոլորտը նշանակալի զարգացում չի ապրել: Պատճառներից կարելի է առանձնացնել շահագրգիռ անձանց՝ դատավորների, փաստաբանների և այլոց կողմից հաշտարարության և դրա առավելությունների մասին կողմերին պատշաճ ձևով չիրազեկելը և դրա կիրառությունը չքաջալերելը:

Հաշտարարություն նշանակելու վերաբերյալ սույն ուղեցույցը նախատեսված է այն դատավորների համար, որոնք իրենց գործունեության շրջանակներում իրավասու են աջակցելու հաշտարարության ոլորտի զարգացմանը՝ առաջարկելով դատավարության կողմերին իրենց ընտանեկան, քաղաքացիական, կորպորատիվ, աշխատանքային կամ այլ իրավահարաբերություններից բխող վեճերը լուծել հաշտարարության միջոցով նախքան դատավարությունը շարունակելը:

Ուղեցույցը դատավորներին գործնական առաջարկություններ է տալիս հետևյալի մասին.

1. ինչպես արդյունավետորեն պարզաբանել հաշտարարության էությունը դատական նիստում կամ հաշտարարություն նշանակելիս ներկայացնել դրա հնարավոր դրական ազդեցությունը տվյալ գործի համար,
2. ինչպես իրականացնել գործի դիագնոստիկա գնահատելու՝ որքանով է նպատակահարմար գործով նշանակել հաշտարարություն,
3. ինչպես որոշել հաշտարարություն նշանակելու հարմար ժամանակը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումների շրջանակներում),
4. ինչպես նշանակել հաշտարար՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները:

Ուղեցույցում վերոնշյալ հարցերից բացի ներկայացված է նաև դատավորների դերը հաշտարարության զարգացման գործում:

Գլուխ 1. Դատավորների դերը հաշտարարության զարգացման գործում

Դատարանն արդարադատություն իրականացնում է նյութական և դատավարական իրավունքի նորմերի հիման վրա ապացուցողական գործունեություն ծավալելու միջոցով և ապահովում է վիճելի իրավահարաբերության վերաբերյալ օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացումը: Այնուհանդերձ գործի ելքը երբեմն չի գոհացնում «հաղթած» կողմին: Պատճառն այն է, որ կողմերի միջև վեճի հիմքում ընկած ոչ իրավական հարաբերությունները դատական ակտով չեն կարգավորվում:

Ի տարբերություն վերոնշյալի՝ իր բնույթով հաշտարարությունն ուղղված չէ վեճի լուծմանը: Հաշտարարն իր առջև չի դնում վեճն ըստ էության լուծելու պահանջ և չի պարզում, թե ով է ճիշտ և ով սխալ: Հաշտարարությունը նպատակ է հետապնդում դադարեցնել վեճը կողմերի ակտիվ մասնակցությամբ:

Չնայած ունեցած առավելություններին՝ ՀՀ իրավական համակարգում հաշտարարություն կիրառելու մշակույթի զարգացումը շարունակում է մնալ առաջնային խնդիրներից մեկը: Հաշտարարության նկատմամբ վստահության բացակայությունը պայմանավորված է դրա վերաբերյալ տեղեկատվության սակավությամբ: Այդ է պատճառը, որ շատ քաղաքացիներ տեղյակ չեն հաշտարարության մասին: Ավելին, դատավարության մասնակիցների և իրավական ոլորտի մասնագետների ճնշող մեծամասնությունը, շատ հաճախ ծանոթ լինելով «հաշտարարություն» եզրույթին, համեմատաբար նվազ պատկերացումներ ունեն հաշտարարության բնույթի և վեճերի կարգավորման հարցում դրա արդյունավետության մասին: Հենց սա է թույլ տալիս պնդելու, որ հաշտարարության վերաբերյալ բավարար տեղեկատվության հստակ կարիք կա՝ պարզաբանելու, թե ինչ է հաշտարարությունը և ինչպես այն պետք է կիրառվի առանձին գործերով: ԵԽ անդամ պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հաշտարարության կիրառման տարածման գործում առանցքային դեր է ունեցել դատավորների կողմից դրա խրախուսումը՝ հաշտարարության ուղղորդման համակարգից անկախ:[1]

Հաշտարարության կիրառումն ավելացնելու հարցում շահագրգռվածություն պետք է ունենան նաև դատավորները, որոնք ծանրաբեռնված են դատական գործերով: Այդ գործերի մի մասն իրավական լուծում չի պահանջում և ուղղված է կողմերի միջև ոչ իրավական հարաբերությունները կարգավորելուն: Ուստի հաշտարարություն կիրառելով՝ դատարանները հնարավորություն կստանան կենտրոնանալ այն վեճերի վրա, որոնք առաջացել են իրավական հարցերի շուրջ և խնայել դատական ռեսուրսները:

Հնարավորության դեպքում պետք է ապահովել հաշտարարության մասին տեղեկատվության հասանելիությունը կողմերի համար: Դատավորները պետք է կարողանան՝

- որոշել տվյալ գործի համապատասխանությունը հաշտարարության համար,
- պատասխանել հաշտարարության գործընթացի վերաբերյալ կողմերի հարցերին,

[1] Հաշտարարության զարգացման գործիքակազմ. Հաշտարարության վերաբերյալ ԱԱԵՀ-ի ուղենիշների կիրարկման ապահովում (27.06.2018թ.): Հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/cepej-2018-7-toolkit-en-rev-armenian-2751-9963-4181-v-1/1680a4907c

- խոսել կողմերի համար հաշտարարության դրական հետևանքների մասին (օրինակ՝ հնարավորություն է տալիս կողմերին պատասխանատու լինել իրենց վեճի ելքի համար՝ վերջնականորեն կարգավորելով այն իրենց կարիքներին համապատասխան),
- հակադարձել կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից հաշտարարությանը վերաբերող ցանկացած առարկության:

Այնուամենայնիվ, դատավորների հետաքրքրությունը հաշտարարության նկատմամբ ցածր է՝ պայմանավորված հաշտարարության ոլորտում առկա բացերով: Դրանցից են՝

- վերապատրաստումների սակավությունը,
- հաշտարարության ենթակա գործերի ընտրության դժվարությունը. հաշտարարություն նշանակելու միասնական մոտեցման բացակայությունը,
- հաշտարարության նշանակման ոչ արդյունավետ ընթացակարգը,
- հաշտարարների մասին անբավարար տեղեկությունները:

Դատավարության կողմերին առաջարկելով սկսել հաշտարարական գործընթաց՝ դատավորը չի հրաժարվում կամ ազատվում իր ինստիտուցիոնալ գործառույթից: Դատավորը՝

- որոշում է, թե արդյոք տվյալ գործով կամ ինքնուրույն պահանջի մասով կարող է նշանակվել հաշտարարություն[2],
- որոշում է, թե վարույթի որ փուլում առաջարկի կողմերին նախաձեռնել հաշտարարական գործընթաց,
- նշանակում է հաշտարարին, եթե կողմերը չեն ընտրել արտոնագրված հաշտարարի կամ հաշտարարությունը նշանակվել է դատարանի նախաձեռնությամբ[3],
- հաշտարարություն նշանակելու մասին որոշմամբ սահմանում է հաշտարարության ժամկետ[4],
- հետաձգում է գործի քննությունը, եթե հաշտարարության գործընթացը դեռևս չի ավարտվել, և կողմերը համատեղ միջնորդություն են ներկայացրել հաշտարարական գործընթացը շարունակելու մասին[5],
- հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնություն չկնքվելու դեպքում շարունակում է գործի քննությունն ընդհատման պահից[6],

---

[2] Տես «Հավելված 2»-ը

[3] «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (պաշտոնապես շրջանառության մեջ դրված, Ազգային ժողովի ութերորդ գումարման նստաշրջանի օրակարգում դեռևս չընդգրկված) նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «...դատարանի նախաձեռնությամբ հաշտարարություն նշանակելու դեպքում դատարանը մեկօրյա ժամկետում հաշտարարի թեկնածություն ներկայացնելու պահանջագիր է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պահանջագրում նշելով դատական գործի համարը, գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), կողմերի միջև առկա վեճի բնույթը, պահանջները, այլ անհրաժեշտ տվյալները»:

[4] ՀՀ ՔԴՕ 184-րդ հոդվածի 4-րդ մաս

[5] ՀՀ ՔԴՕ 185-րդ հոդվածի

[6] ՀՀ ՔԴՕ 186-րդ հոդվածի 7-րդ մաս

- հաստատում (կամ մերժում) է հաշտարարության արդյունքով կնքված հաշտության համաձայնությունը[7],
- եթե հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնություն չի կնքվում, գործը քննվում և լուծվում է նույն դատավորի կողմից:

Գլուխ 2. Դատավարության ո՞ր փուլում առաջարկել սկսել հաշտարարական գործընթաց (նշանակել հաշտարարական գործընթաց)

Չնայած հաշտարարության գործընթացը կարելի է սկսել մինչև առաջին ատյանի դատարանում դատաքննության կամ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ավարտը[8], գործի տեսակով և հանգամանքներով պայմանավորված՝ նախընտրելի է հաշտարարություն սկսելու առաջարկ անել այն ժամանակ, երբ կողմերը պատրաստ են հաշտարարությանը մասնակցելու վերաբերյալ տեղեկացված որոշում կայացնել:

Ընդհանուր առմամբ ժամանակի և ծախսերի խնայողության տեսանկյունից գերադասելի է հաշտարության գործընթացն սկսել վաղ: Վիճող կողմերի փոխհարաբերությունները հակված են աստիճանաբար վատթարանալուն, ուստի որքան ուշ է հաշտարարությունն սկսվում, այնքան կառուցողական երկխոսության վերականգնումն ավելի ժամանակատար է լինում: «Ժամանակը փող արժե». շարունակ ձգվող վեճի հետևանքով առաջանում են ծախսեր՝ կապված դրամական միջոցների վրա արգելանքի, դրամական շրջանառության, գույքային կամ հարկային պարտավորությունների կատարման դժվարությունների, իրավաբանական (փաստաբանի, փորձագետի և այլ) ծախսերի հետ:

Երբեմն, սակայն, նախքան վեճի կողմերին հաշտարարության դիմելու առաջարկ անելը նախընտրելի է սպասել մինչև կողմերի միջև լարվածությունը թուլանա: Ավելի ուշ փուլում հաշտարարություն սկսելու առաջարկ անելը կարող է մեծացնել կողմերի հաշտվելու պատրաստակամությունը: Երբեմն կողմերը որոշում են հաշտարարական գործընթաց սկսել դատական գործընթացի ավարտին, երբ արդեն բացահայտված են իրենց դիրքորոշումների ուժեղ և թույլ կողմերը:

Հետևաբար, եթե կողմերը նախնական դատական նիստի ժամանակ չեն համաձայնում հաշտարարական գործընթաց սկսել, դատարանը կարող է դատաքննության նախապատրաստության փուլում կրկին հաշտարարություն սկսելու առաջարկով հանդես գալ: Դատավորը կարող է ապահովել, որ կողմերը հաշտարարության գործընթաց սկսեն, երբ նրանք ամենից շատն են շահագրգռված և պատրաստ:

Գլուխ 3. Հաշտարարության էության պարզաբանումը

Իրավական ոլորտի տարբեր մասնագետներ են առօրյայում ներգրավվում վեճերի կարգավորման մեջ: Այդուհանդերձ վիճող կողմերը միանգամից չէ, որ դիմում են

[7] Նույն տեղում

[8] ՀՀ ՔԴՕ 19-րդ հոդվածի 1-ին մաս

հաշտարարության, երբ հայտնվում են կոնֆլիկտային իրավիճակում: Սա ունի իր պատճառները՝

- Հաշտարարությունը որպես վեճերի կարգավորման մեթոդ դեռևս լայն տարածում չունի: Շատերը տեղյակ չեն հաշտարարության մասին, մի մասն էլ թյուր պատկերացումներ ունի, թե ինչպես և երբ կարելի է օգտվել դրանից:
- Ի տարբերություն վեճերի լուծման այլ եղանակների՝ վեճի կողմը միակողմանիորեն չի կարող հաշտարարական գործընթաց նախաձեռնել: Որքան վեճը խորանում է, այնքան կողմերի համար բարդանում է հաշտարարության դիմելու, հաշտարար ընտրելու շուրջ համաձայնության գալը: Բացի դրանից, դատական պրակտիկայում կողմերը խուսափում են առաջարկել կիրառել հաշտարարություն, քանզի մտածում են, որ մյուս կողմն այդ քայլը կգնահատի որպես նրա՝ գործի հնարավոր ելքում ունեցած առավելություն: Նման դեպքերում անհրաժեշտ է երրորդ անձի օգնությունը:
- Կողմերը երբեմն հրաժարվում են ընդունել վեճի առկայությունը, մինչև որևէ չեզոք կողմ չի առերեսում նրանց վեճի կարգավորման անհրաժեշտությանը:

Վեճը հաշտարության միջոցով փոխշահավետ կարգավորելու համար պահանջվում է կողմերի ակտիվ մասնակցությունը: Հաշտարարությունը բարեհաջող է մեկնարկում և հարթ է ընթանում, երբ դատավորը նախապես կողմերին դրական է տրամադրում հաշտարարության նկատմամբ: Հետևաբար, նախքան կողմերին հաշտարարության գործընթաց սկսելու մասին առաջարկ ներկայացնելը կամ հաշտարարություն նշանակելու վերաբերյալ որոշում կայացնելը պետք է համոզվել, որ կողմերը բավարար չափով տեղեկացված են հաշտարարության մասին և հասկանում են, որ իրենց իսկ շահերից է բխում փոխադարձ համաձայնությամբ վեճի կարգավորման հասնելը:[9]

Դատավորների կողմից հաշտարարության էությունը գործին մասնակցող անձանց պարզաբանելու անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ ՔԴՕ 167-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բովանդակությունից:[10]

Կողմերը պետք է հստակ պատկերացում ունենան հաշտարարության գործընթացի մասին, որպեսզի նրանք կողմնորոշվեն, ինքնուրույն որոշում կայացնեն հաշտարարության գործընթաց սկսելու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ:

Հաշտարարական գործընթացի մասին տեղեկությունները կողմերին պետք է տրամադրել այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են կոնկրետ դեպքում, ուստի նախընտելի է հաշտարարության ուղղորդելու գործընթացն սկսել՝ պարզելով, թե կողմերն ընդհանրապես որքանով են տեղեկացված հաշտարարության մասին: Ավելին, դատավորը պետք է կարողանա հակադարձել կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից բարձրացված՝ հաշտարարությանը վերաբերող ցանկացած առարկության՝ ոչ թե նրանց

---

[9] Referral to Mediation: A Practical Guide for an Effective Mediation Proposal by Machteld Pel (1 April 2008)

[10] ՀՀ ՔԴՕ 167-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում՝պարզում է՝ հայցվորը պնդում է արդյոք իր պահանջները, պատասխանողն արդյոք ամբողջությամբ կամ մասնակի ընդունում է հայցվորի պահանջները, և գործին մասնակցող անձինք չեն ցանկանում արդյոք կնքել հաշտության համաձայնություն կամ վեճը լուծել հաշտարարության միջոցով՝ պարզաբանելով հաշտարարության էությունը»:

հետ վիճաբանության մեջ մտնելով, այլ ուսումնասիրելով նրանց կողմից ցուցաբերված դիմադրության պատճառները:

Կողմերը պետք է տեղեկացվեն առնվազն հետևյալի մասին՝

- Հաշտարարության սահմանումը
- Հաշտարարության ժամկետը
- Հաշտարարության առավելությունները (գործընթացի գաղտնիություն, գործընթացի վերահսկում, ժամանակի և ծախսերի խնայողություն, փոխհարաբերությունների պահպանում և այլն)
- Հաշտարարական գործընթաց նախաձեռնելու կարգը
- Հաշտարարության գործընթացի վճարովի լինելը, կողմերի միջև ծախսերի հավասարաչափ բաշխվելը
- Հաշտարարության նշանակման դատավարական հետևանքները:

Դատական նիստի ընթացքում դատարանը կողմերին (նրանց ներկայացուցիչներին) բանավոր տեղեկացնում է հաշտարարության մասին: Նախընտրելի է, որ դատարանը կողմերին բանավոր տեղեկացնելուց բացի տրամադրի է նաև գրավոր բացատրագիր,[11] որի օրինակը ներկայացված է Հավելված 1-ում: Այս մոտեցման արդյունքում հաշտարարության մասին կողմերին տրամադրվում է համակարգված տեղեկատվություն:

Իհարկե, յուրաքանչյուր դատավոր կողմերին հաշտարարության ուղղորդելու իր ոճն ունի, սակայն կան որոշակի մոտեցումներ, որոնք դյուրինացնում են գործընթացը: Դատավորը կարող է ընտրել «համոզելու» կամ «գայթակղելու» մարտավարություն:[12] Առաջին դեպքում դատավորը կողմերին խորհուրդ է տալիս հաշտարարության գործընթաց սկսել կամ հաշտարարությունը ներկայացնում է որպես տվյալ դեպքում վեճի լուծման լավագույն եղանակ: Իսկ երկրորդ դեպքում կողմերին պարզապես առաջարկվում է սկսել հաշտարարական գործընթաց:[13] Անկախ ընտրված ոճից, պետք է հիշել, որ կողմերն ունեն արդարադատության մատչելիության իրավունք: Հետևաբար դատավորը չպետք է տպավորություն թողնի, որ ցանկանում է ձերբազատվել գործից:[14]

«Համոզելու» և «գայթակղելու» մարտավարությունների թույլատրելի և անթույլատրելի քայլերը.

Թույլատրելի քայլեր	Անթույլատրելի քայլեր
• Մանրակրկիտ նախապատրաստվել հաշտարարություն նշանակելու առաջարկի քննարկմանը, ուսումնասիրել կողմերի դիրքորոշումները • Բացատրել հաշտարարության էությունը (տես Հավելված 1)	• Միանգամից շատ տեղեկատվություն տրամադրել • Սպառնալ • «Դասախոսություն կարդալ» • Կողմերին հրահանգներ տալ • Կողմնապահություն անել

[11] «Հաշտարարությունը դատավորների համար» ծրագիր (Mediation meets Judges (MmJ) project): Մանրամասն՝ https://www.mediationmeetsjudges.eu

[12] Referral to Mediation: A Practical Guide for an Effective Mediation Proposal by Machteld Pel (1 April 2008)

[13] Նույն տեղում

[14] Նույն տեղում

• Բացատրել՝ ինչու է հաշտարարությունը տվյալ դեպքում վեճի լուծման լավագույն եղանակը • Ուշադիր լսել կողմերին և փորձել բացահայտել նրանց իրական շահերը • Հետաքրքրություն ցուցաբերել կողմերի կարիքների, շահերի և խնդիրների նկատմամբ • Հստակ ցույց տալ կողմերին, որ վեճի կարգավորման եղանակն ընտրելիս վերջնական որոշում կայացնողներն իրենք են • Պարզաբանել, որ հաշտարարությունից հրաժարվելը որևէ բացասական հետևանք չի ունենալու հետագա գործընթացների վրա	• Մեղադրել
Ի լրումն վերոնշյալի՝ «գայթակղելու» մարտավարության թույլատրելի և անթույլատրելի քայլերն են.	
• Հարցերի միջոցով պարզել, թե ինչ շահեր և հետաքրքրություններ են հետապնդում կողմերը • Հավասար վերաբերմունք ցուցաբերել վեճի կողմերին • Տալ իրավիճակային հարցեր՝ պարզելու, թե այս կամ այն դեպքում կողմերն ինչպես կվարվեին (ի՞նչ կանեիք, եթե..., ի՞նչ եք կարծում...)	• Ուղիղ հարցեր տալ (ո՞վ, ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ) • Հարցնել այս կամ այն արարքի պատճառը

Գլուխ 4. Գործի՝ հաշտարարության համար համապատասխանության հարցը որոշելը

Ընդհանուր առմամբ չկան գործեր, որոնք անխոս ենթակա չեն հաշտարարության: Սակայն կա գործերի շրջանակ, որ առավել հարմար է հաշտարարության համար: Անհամապատասխան գործերով հաշտարարության գործընթաց սկսելը կարող է հանգեցնել հուսահատության, ժամանակի, դրամական միջոցների և էներգիայի կորստի: Մյուս կողմից, սակայն, ծայրահեղ ընտրովի մոտեցման դեպքում հաշտարարության ենթակա որոշ գործեր կարող են դուրս մնալ՝ կողմերին զրկելով իրենց վեճը փոխշահավետ և վերջնականապես կարգավորելու հնարավորությունից:

Հենց այս պատճառով է, որ նախքան գործով հաշտարարություն նշանակելը, դատավորը պետք է համոզվի, որ տվյալ գործն ընդհանուր առմամբ համապատասխանում է հաշտարարության համար: Որքանով որ հաշտարարության ուղղորդելը, դրա արդյունավետության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը կարևոր մասնագիտական հմտություն է համարվում, այդքանով էլ հմտություն է տարբերել այն իրավիճակները, երբ հաշտարարությունն արդյունավետ չի լինելու: Այստեղ օգնության են գալիս տարբեր երկրների պրակտիկայի արդյունքում ձևավորված ընդհանուր ցուցիչները և հակացուցիչները, որոնք պետք է հաշվի առնել գործի՝ հաշտարարության համար համապատասխանության հարցը գնահատելիս:[15]

Հաշտարարությունը վեճի կարգավորման հնարավոր մեթոդ է դիտարկվում հետևյալ դեպքերում՝[16]

[15] Հաշտարարության զարգացման գործիքակազմ. Հաշտարարության վերաբերյալ ԱԱԵՀ-ի ուղենիշների կիրարկման ապահովում (27.06.2018 թ.): Հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/cepej-2018-7-toolkit-en-rev-armenian-2751-9963-4181-v-1/1680a4907c

[16] Նույն տեղում

- Երբ կողմերի միջև իրավահարաբերությունները շարունակական, երկարաժամկետ են (գործնական, պայմանագրային, ընտանեկան, հարևանային, աշխատանքային, կորպորատիվ և այլն),
- Վեճի իրավական լուծումը կլուծի վեճը մասնակի, քանի որ վեճի հիմքում այլ էական վեճեր, խնդիրներ կան,
- Վեճն ունի հուզական բնույթ,
- Առկա են համընկնող կամ փոխլրացնող տնտեսական շահեր՝ որոնցից ելնելով կողմերը կարող են վերանայել իրենց միջև առկա իրավահարաբերությունները կամ հաստատել նոր համագործակցություն,
- Կողմերի շահերից է բխում վեճի արագ լուծումը (դատական ծախսերը և գործընթացի տևողությունն անհամաչափ են վեճում ընդգրկված շահերին),
- Խնդիրները չափազանց բարդ բնույթ են կրում: Դրանք վերաբերում են մի քանի պահանջների, մի քանի անձանց կամ կազմակերպությունների,
- Դատական գործընթացի ձգձգման պատճառով կողմերն ուժասպառ են եղել,
- Վեճը դեռևս շատ չի թեժացել (օրինակ՝ վերածվել ծեծկռտուքի),
- Կողմերը չեն կարող կամ չեն ուզում վեճն ինքնուրույն կարգավորել,
- Կողմերի համար կարևոր է գործընթացի գաղտնիությունը և այլն:

Հաշտարարությունը խորհուրդ չի տրվում, եթե՝

- Կողմն անբարեխիղճ վարքագիծ է դրսևորում (օրինակ՝ կողմերի միակ նպատակը վեճի կարգավորմանը խոչընդոտելն է),
- Վեճն արդեն բավականին խորացել և թեժացել է (առկա է ուժի կիրառման սպառնալիք),
- Գործին մասնակցող որևէ անձ չի առարկել հայցի դեմ,
- Դատական գործի շրջանակներում արդեն իսկ քննարկվում է հաշտության համաձայնություն,
- Կա ուժերի զգալի անհավասարակշռություն, կողմերի միջև առկա է ճնշում կամ բռնություն[17] (կողմն ի վիճակի չէ ազատ և տեղեկացված որոշում կայացնել),
- Առկա է օրենքով սահմանված պաշտպանության միջոց կիրառելու անհրաժեշտություն,
- Դատական նախադեպի անհրաժեշտություն կա,
- Հրապարակային գործընթացի անհրաժեշտություն կա (օրինակ՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության վերաբերյալ գործերը) և այլն:

Ինչպես արդեն նշվել է, նախքան գործով հաշտարարություն նշանակելը, դատավորը պետք է համոզվի, որ տվյալ գործով հաշտարարություն իրականացնելու նախապայմաններն առկա են: Գործին հանգամանալից ծանոթանալուց հետո խորհուրդ է տրվում փորձել հարցերի միջոցով պարզել կողմերի միջև լարվածության աստիճանը, նրանց իրական շահերը և կարիքները, գործի ելքի վերաբերյալ ակնկալիքները,

[17] Հաշտարարության վերաբերյալ ԱԱԵՀ ուղենիշներով, որոնք կազմվել են միջազգային կոնվենցիաներում և փաստաթղթերում ամրագրված սկզբունքների հիման վրա, հստակ սահմանվում է, որ բռնության տարրեր պարունակող գործերով պարտադիր հաշտարարություն կարող է իրականացվել միայն լրացուցիչ օրենսդրական և գործնական երաշխիքներ նախատեսված լինելու դեպքում:

բանակցելու պատրաստակամությունը և հաշտարարության մասին իրազեկվածության աստիճանը:

Բանակցելու պատրաստակամության ցուցիչներն են՝

- Կողմերը փնտրում են վեճի արագ և արդյունավետ լուծում,
- Կողմերի համար գործի ելքը բացարձակապես անորոշ է (ունեն սխալ ակնկալիքներ),
- Կողմերը ցանկանում են վերահսկել գործի ելքը,
- Կողմերը ցանկանում են բարելավել կամ վերականգնել հարաբերությունները,
- Վարույթի ծախսատարության և տևողության նվազեցում և այլն:

Հավելված 2-ում ներկայացված հարցաշարն ուղղված է գնահատելու՝ արդյոք հնարավոր է տվյալ գործով իրականացնել հաշտարարություն: Հարցերին պատասխանելով՝ հնարավոր է արագ առանձնացնել համապատասխանող գործերը: Հարցաշարը կազմվել է հատկապես քաղաքացիական և առևտրային վեճերի կոնտեքստում:

Գլուխ 5. Հաշտարարի նշանակումը

ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատարանն իրավունք ունի նշանակելու արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց՝

ա. կողմերի համաձայնությամբ կամ միջնորդությամբ,

բ. սեփական նախաձեռնությամբ, եթե մեծ է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը:

Առաջին դեպքում դատարանը նշանակում է կողմերի ընտրած արտոնագրված հաշտարարին: Եթե կողմերը չեն ընտրում արտոնագրված հաշտարար, ապա հաշտարարին նշանակում է դատարանը: Իսկ երկրորդ դեպքում դատարանն է նշանակում հաշտարարին: Հաշտարարություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որտեղ նշվում է արտոնագրված հաշտարարի անունը և այլ անհրաժեշտ տվյալներ:

Հաշտարարը նշանակվում է արտոնագրված հաշտարարների ռեեստրում ընդգրկված անձանց ցանկից, որը հրապարակված է ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում:[18] Ընդ որում՝ հաշտարար ընտրելիս դատարանը պետք է հաշվի առնի հաշտարարների մասնագիտացումն ու ծանրաբեռնվածությունը:[19]

Ռեեստրում, սակայն, հաշտարարների ծանրաբեռնվածության մասին տեղեկությունները բացակայում են, իսկ մասնագիտացման մասին տվյալները միասնական ձևաչափով չեն ներկայացված, ինչը դատավորների համար դժվարացնում է նրանց ընտրությունը: Հաշտարար ընտրելու ընթացքը հեշտ չէ նաև կողմերի համար, քանի որ հաշտարարների մասին տեղեկությունները կայքում հեշտ հասանելի տեղում չեն տեղադրված:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի և

---

[18] Արտոնագրված հաշտարարների ռեեստրը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.moj.am/page/582

[19] Տե՛ս ՔԴՕ 184-րդ հոդվածի 5-դ մասը:

«Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի վերը նշված նախագծերով նախատեսվում է հաշտարարի թեկնածուի ընտրության նոր ընթացակարգ, ըստ որի Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում հաշտարարի թեկնածուի ընտրությունն իրականացնելու է Արդարադատության նախարարությունը էլեկտրոնային համակարգի միջոցով դատարանի պահանջագրի հիման վրա:[20]

Արտոնագրված հաշտարարների մասին տեղեկատվության հասանելիությունն ապահովելու համար Հայաստանի հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության վեբկայքում («Հաշտարարներ» ենթաբաժին)[21] ստեղծվել է որոնողական համակարգ, որը հնարավորություն է տալիս կատարել կայքում գրանցված հաշտարարների որոնում՝ ըստ ֆիզիկական անձանց անվան կամ իրավաբանական անձանց (հաշտարարական կազմակերպության) անվանման, մասնագիտացման, գործունեության տարածքի և օտար լեզվի իմացության:

Խորհուրդ է տրվում հաշտարարական գործընթացի մասին կողմերին տեղեկություններ տրամադրելիս պաշտոնական ռեեստրից բացի տեղեկացնել նաև վերոնշյալ էլեկտրոնային որոնողական համակարգի մասին (տես Հավելված 1):

Պատկեր 1. Արտոնագրված հաշտարարի որոնողական համակարգ



Աղբյուրը՝ Հայաստանի հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության վեբկայք՝ https://mediators.am

[20] Տես «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 8-րդ հոդվածը (http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=66746), «Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդվածը (http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=66741):

[21] Հայաստանի հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության վերկայքն (https://mediators.am) ստեղծվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից՝ Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) ծրագրային ձևաչափի շրջանակներում ֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագրի շրջանակներում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հաշտարարության մասին կողմերին տեղեկացնելու գրության օրինակ

Ներածական մեկնաբանություններ դատարանում գործող պրակտիկայի համաձայն:

- Տեղյա՞կ եք, որ վեճը կարող եք լուծել նաև հաշտարարությամբ:
- Չե՞ք ցանկանում վեճը լուծել հաշտարարության միջոցով:

Ի՞նչ է հաշտարարությունը

Հաշտարարությունը գործընթաց է, որի նպատակն է կարգավորել Ձեր վեճը հաշտարարի օգնությամբ: Հաշտարարությունը թույլ է տալիս գտնելու հարցերի անհատական և փոխադարձ համաձայնեցված և ընդունելի լուծումներ՝ կողմերին ազատելով դատական ծախսերից և դատական անորոշությունից:

Հաշտարարությունն օգնում է կողմերի միջև վերականգնել երկխոսությունը, ապահովում է խորհրդակցությունների ընթացքում վեճի կողմերի տրամադրած տեղեկությունների գաղտնիությունը, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել կողմերի իրական շահերը և կարիքները վեճի իրավական կարգավորման շրջանակներից դուրս: Հաշտարարության արդյունքում կողմերը մշակում են հաշտության համաձայության տեքստը:

Ո՞վ է հաշտարարը

Հաշտարարը գործի ելքով շահագրգռվածություն չունեցող, անկախ և անկողմնակալ անձ է, որն ունի համապատասխան մասնագիտական պատրաստվածություն և արտոնագիր:

Հաշտարարության և հաշտարարի նշանակումը

Կողմերը ընտրում են արտոնագրված հաշտարար արտոնագրված հաշտարարների ռեեստրում գրանցված անձանց ցանկից:[22] Այն դեպքում, երբ կողմերը չեն ընտրում հաշտարար, ապա հաշտարարին նշանակում է դատարանը:

Դատարանը հետաձգում է գործի քննությունը, եթե գործին մասնակցող անձը միջնորդում է տրամադրել ողջամիտ ժամկետ հաշտարարական գործընթաց սկսելու համար, և գործին մասնակցող մյուս անձինք չեն առարկում:

Եթե կողմերը հաշտարարության արդյունքով չեն հաշտվում, գործի քննությունը շարունակվում է դատարանում ընդհատման պահից:

Հաշտարարության պարտադիր լինելը

---

[22] Հաշտարարի որակավորման քննություն հանձնած և հաշտարարի որակավորման վկայագիր ստացած անձանց ռեեստր՝ https://www.moj.am/page/582

Հայաստանի հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպություն, «Հաշտարարներ» բաժին՝ https://mediators.am/hy/science_list/hashtararner/

Եթե մեծ է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը, դատարանը կարող է նշանակել մինչև չորս ժամ անվճար հաշտարարություն: Այն դեպքում, երբ հաշտարարություն նշանակվում է դատարանի նախաձեռնությամբ, ապա հաշտարարին նշանակում է դատարանը:

Հաշտարարության ժամկետը

Դատարանի նշանակած հաշտարարության սկզբնական ժամկետը չի կարող գերազանցել երեք ամիսը: Կողմերն իրավունք ունեն միայն մեկ անգամ համատեղ միջնորդությամբ երկարաձգել հաշտարարության ժամկետը: Հաշտարարության առավելագույն ժամկետը վեց ամիս է:

Հաշտարարության սկզբունքները

Հաշտարարությունն իրականացվում է կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկախության և անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

Հաշտարարության կամավորությունը

- Կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ հաշտարարական գործընթաց սկսել մինչև առաջին ատյանի դատարանում դատաքննության կամ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ավարտը:
- Կողմերն ազատ են հաշտարար ընտրելու հարցում:
- Յուրաքանչյուր կողմ հաշտարարությունն սկսելուց հետո ցանկացած պահի կարող է դադարեցնել հաշտարարության գործընթացը:
- Կողմերն են որոշում հաշտության համաձայնության պայմանները: Հաշտության համաձայնության մեջ կարող են ընդգրկվել միայն այն պայմանները, որոնց շուրջ համաձայնության են եկել կողմերը:

Հաշտարարության գաղտնիությունը

- Հաշտության համաձայնության ձեռքբերման համար բանակցությունները գաղտնի են:
- Հաշտարարը և կողմերը, ինչպես նաև հաշտարարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր են պահպանել հաշտարարական գաղտնիքը: Հաշտարարական գաղտնիք են հաշտարարության ընթացքում բացահայտված կամ արտահայտած տեղեկությունները, հաշտարարության բովանդակությունն ու բնույթը:
- Հաշտարարության արդյունքում կայացված հաշտության համաձայնությունը գաղտնի է:
- Հաշտարարը, կողմերը կամ հաշտարարությանը մասնակցած կամ մասնակցող յուրաքանչյուր անձ չեն կարող հարցաքննվել որպես վկա այն տեղեկությունների վերաբերյալ, որոնք իրենց հայտնի են դարձել հաշտարարության ընթացքում:
- Հաշտարարական գաղտնիքը կարող է հրապարակվել կողմերի գրավոր համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Կողմերի հավասարությունը

- Հաշտարարության կողմերն օժտված են հավասար իրավունքներով: Բանակցությունների ընթացքում կողմերն ունեն հավասար հնարավորություններ հաշտության համաձայնության մեջ պայմաններ նախատեսելու հարցում:

Հաշտարարության առավելությունները

- Հաշտարարության միջոցով կողմերի միջև առաջացած վեճը կարելի է լուծել շատ սեղմ ժամկետներում, նույնիսկ մի քանի ժամում՝ խնայելով ծախսերը և ժամանակը:
- Հաշտարարությունը նպաստում է կողմերի միջև ավելի բարյացակամ փոխհարաբերությունների հաստատմանը, քանի որ խնդիրները լուծվում են կողմերի համագործակցությամբ:
- Հաշտարարի վարձատրության չափը որոշվում է կողմերի և հաշտարարի միջև համաձայնությամբ: Հաշտարարության հետ կապված ծախսերը կողմերը կրում են հավասարաչափ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:
- Այն դեպքում, երբ հաշտարարությունը նշանակված է դատարանի կողմից, և կողմերը դատարանի կողմից հաշտարարության համար սահմանված ժամկետում կնքում են հաշտության համաձայնություն, վճարված պետական տուրքը վերադարձվում է պետական տուրք վճարած կողմին հետևյալ չափաբաժիններով՝

  ա) 50 տոկոս, եթե հաշտարարությունը նշանակել է առաջին ատյանի դատարանը.
  բ) 40 տոկոս, եթե հաշտարարությունը նշանակել է վերաքննիչ ատյանի դատարանը:[23]

Հաշտարարության ավարտը

Հաշտարարության գործընթացն ավարտվում է կողմերից առնվազն մեկի կամ հաշտարարի կողմից գործընթացը դադարեցնելով կամ հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնություն կնքելու միջոցով:

Հաշտության համաձայնություն կնքելու դեպքում հաշտության համաձայնության մեկական օրինակ տրվում է կողմերին, հաշտարարին, դատարանին:

Դատարանն առավելագույնը երկշաբաթյա ժամկետում հաստատում կամ մերժում է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը կամ կարճում է գործի վարույթը՝ ապահովելով հաշտարարության գաղտնիությունը:

Եզրափակիչ մեկնաբանություններ դատարանում գործող պրակտիկայի համաձայն:

[23] «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38.1-ին հոդված

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հարցաշար

Արդյո՞ք կարող է տվյալ գործով իրականացվել հաշտարարություն

Հարցաշարի լրացման հրահանգներ

- Եթե հարցը տվյալ գործին մասամբ է վերաբերելի, նշում կատարել «Մասամբ» սյունյակում.
- Եթե հարցին տրվում է «ոչ» պատասխանը, նշանակում է, որ գործի դատական քննությունը չպետք է ընդհատել հաշտարարություն նշանակելու նպատակով.
- Եթե հարցին տրվում է «այո» պատասխանը, նշանակում է, որ հաշտարարություն կարող է իրականացվել: Այսպիսով, «այո»-ի մեծամասնությունը նշանակում է, որ գործով կարող է նշանակվել հաշտարարություն:

Ա. Էական պայմաններ	**Այո**	**Մասամբ**	**Ոչ**
1. Կարո՞ղ է գործով իրականացվել հաշտարարություն ՀՀ օրենսդրության համաձայն:			
2. Կարո՞ղ է գործի քննության տվյալ փուլում նշանակվել հաշտարարություն:			
3. Առկա՞ է մեկ այլ գործ նույն անձանց միջև կամ նրանցից մեկի մասնակցությամբ նույն առարկայի կամ փախկապակցված առարկայի վերաբերյալ:			
4. Ներգրավվա՞ծ են դատավարության մեջ երրորդ անձինք կամ հնարավո՞ր է երրորդ անձինք գործի մեջ մտնեն:			
5. Կողմերի միջև առկա՞ է հաշտարարության վերաբերյալ համաձայնություն:			
Եթե «Էական պայմաններ» բաժնում ընդգրկված հարցերի մեծ մասին տրվել է «այո» պատասխանը, ապա նշանակում է, որ գործով հաշտարարություն նշանակելու իրավական կամ դատավարական խոչընդոտներ չկան:			
Բ. Վեճի համապատասխանությունը			
6. Սեփական փորձից ելնելով՝ կարծում եք կա՞ վեճը հաշտությամբ լուծելու հնարավորություն:			
7. Կարևո՞ր է, որ վեճն արագ լուծվի:			

8. Արդյո՞ք դատական ծախսերը զգալիորեն կգերազանցեն վճռով ստանալիքը:			
9. Արդյո՞ք կողմերի միջոցները սահմանափա՞կ են դատական ծախսեր կրելու համար:			
10. Արդյո՞ք տվյալ գործով վճիռ կայացնելը կարո՞ղ է դժվար լինել (ապացույցների բացակայություն, բարդ կամ տեխնիկական փաստական հանգամանքներ և այլն):			
11. Արդյո՞ք անհրաժեշտ է պահպանել վեճի մանրամասների լրիվ գաղտնիություն:			
12. Արդյո՞ք վեճի առարկան սկզբունքային հա՞րց է կողմերի (կողմերից մեկի) համար:			
13. Արդյո՞ք հնարավոր է, որ վեճի առարկան չի արտահայտում կամ մասամբ է արտահայտում տարաձայնության իրական պատճառը:			
Գ. Կողմերի դիրքորոշումը հաշտարարության նկատմամբ			
14. Ցանկալի՞ է, որ կողմերը հետագայում պահպանեն լավ հարաբերություններ (օրինակ՝ գործնական հարաբերությունները շարունակելու նպատակով, ամուսնալուծությունից հետո երեխաների իրավունքների պաշտպանության նկատառումով և այլ):			
15. Արդյո՞ք դատարանում քննվող գործի ելքը կողմերի համար բացարձակորեն անորոշ է:			
16. Արդյո՞ք կողմերը ցանկանում են վերահսկել գործի ելքը:			
17. Կարևո՞ր է, որ կողմերը վերահսկեն գործընթացի տևողությունը և ժամկետները:			
18. Արդյո՞ք կողմերը նշանակություն են տալիս հանրային արդարացմանը:			
Դ. Հաշտարարության օգտակար ազդեցությունը տվյալ վեճի վրա			
19. Արդյոք հաշտարարությունը կօգնի՞ կողմերին գտնելու փոխշահավետ լուծում իրավական կարգավորման շրջանակից դուրս:			

20. Հավանակա՞ն է, որ վեճը լուծվի, եթե կողմը/կողմերն ընդունեն իրենց սխալները և ներողություն խնդրեն:			

Հարցաշարի պարզաբանում

Ա. Էական պայմաններ

Հարց 1 Կարո՞ղ է գործով իրականացվել հաշտարարություն ՀՀ օրենսդրության համաձայն:

Դատավորը որոշում է, թե արդյոք ՀՀ օրենսդրության համաձայն տվյալ բնույթի վեճերով թույլատրվում է իրականացնել հաշտարարություն: Որոշ դեպքում, երբ գործը կամ դրա մի մասը վերաբերում է հանրային կարգին կամ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, հաշտարարություն իրականացնել չի թույլատրվում:[24] Եթե, այնուամենայնիվ, նման դեպքերում հաշտարարություն է իրականացվել, հաշտության համաձայնությունը պետք է չհակասի օրենքին և իրավական այլ ակտերին կամ խախտի այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:[25]

Հարց 2 Կարո՞ղ է գործի քննության տվյալ փուլում նշանակվել հաշտարարություն:

Դատավորը որոշում է, թե արդյոք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն գործի քննության տվյալ փուլում կարող է նշանակվել հաշտարարություն:

Հարց 3 Առկա՞ է մեկ այլ գործ նույն անձանց միջև կամ նրանցից մեկի մասնակցությամբ նույն առարկայի կամ փախկապակցված առարկայի վերաբերյալ:

Հաշտարարությունը վեճերի լուծման ճկուն գործընթաց է: Հաշտարարը կիրառում է ճկուն մոտեցում, մանրակրկիտ և բազմակողմանիորեն ուսումնասիրում է վեճը, վերհանում է նրբությունները և կենտրոնանում է կողմերի համար առավել կարևորություն ունեցող խնդիրների վրա:

Եթե կողմերն այլ նախընտրություն չունեն, հաշտարարը խրախուսում է կողմերին վեճի առարկան դիտարկել բազմակողմանիորեն: Հնարավորության դեպքում

[24] Հաշտարարության զարգացման գործիքակազմ. Հաշտարարության վերաբերյալ ԱԱԵՀ-ի ուղենիշների կիրարկման ապահովում (27.06.2018 թ.): Հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/cepej-2018-7-toolkit-en-rev-armenian-2751-9963-4181-v-1/1680a4907c

[25] ՔԴՕ 151-րդ հոդված

հաշտարարությունը կարող է օգնել լուծելու մի քանի փոխկապված, զուգահեռ քննվող դատական գործեր և լուծում մշակել կողմերի միջև առկա բոլոր վեճերի առնչությամբ:

Հարց 4 Ներգրավվա՞ծ են դատավարության մեջ երրորդ անձինք կամ հնարավո՞ր է երրորդ անձինք գործի մեջ մտնեն:

Գործի վարույթը բարդանում և ծավալը էապես մեծանում է, երբ տարբեր կողմեր են ներգրավված: Հաշտարարությունը ճկուն գործընթաց է, որտեղ տարբեր կողմեր կարող են մասնակցել և միասին աշխատել տարբեր շահերի հաշվառմամբ հավասարակշռված, ամբողջական կամ մասնակի լուծում գտնելու ուղղությամբ:

Հարց 5 Կողմերի միջև առկա է հաշտարարության վերաբերյալ համաձայնություն:

Եթե կողմերի միջև առկա է հաշտարարության վերաբերյալ համաձայնություն, և պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը հղում է կատարում տվյալ վեճը հաշտարարի միջոցով լուծելու վերաբերյալ համաձայնությանը, դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը թողնում է առանց քննության[26], բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գտնում է, որ այդ համաձայնությունն առ ոչինչ է, ուժը կորցրել է կամ ակնհայտորեն չի կարող կատարվել:

Բ. Վեճի համապատասխանությունը

Հարց 6 Սեփական փորձից ելնելով՝ կարծում եք կա՞ վեճը հաշտությամբ լուծելու հնարավորություն:

Նախնական ուսումնասիրության հիման վրա, հաշվի առնելով կողմերի միջև եղած հարաբերությունները, վեճի բնույթը, փաստական հիմքերը, ինչպես նաև այլ արտաքին հանգամանքներ (ժամանակի սղություն, ընկերության ֆինանսական դրություն և այլն), տեսանելի է վեճի ոչ իրավական լուծումը:

Հարց 7 Կարևոր է, որ վեճն արագ լուծվի:

Սովորաբար հաշտարարության գործընթաց սկսելու հիմնական շարժառիթը կողմերի՝ վեճն ավելի արագ լուծելու ցանկությունն է՝ խնայելով միջոցները: Հաշտարարությունն ավելի արագ ընթացակարգ է, քան դատական գործընթացը: Հաշտարարության միջոցով կողմերի միջև առաջացած վեճը կարելի է լուծել շատ սեղմ ժամկետներում, նույնիսկ մի քանի ժամում՝ հանդիպման օրվա շուրջ կողմերի համաձայնության գալու պահից, իսկ դատական գործընթացը տևում է շատ երկար: Միևնույն ժամանակ ՀՀ ՔԴՕ 185-րդ հոդվածը հաշտարարության համար սահմանում է առավելագույնը վեցամսյա ժամկետ՝ հաշտարար նշանակելու պահից: Կողմերը

[26] ՀՀ ՔԴՕ 180-րդ հոդվածի 4-րդ մաս

հաշտարարության վերաբերյալ համաձայնագրում կարող են նախատեսել այլ առավելագույն ժամկետ, բայց ոչ ավելի քան վեց ամիսը:

Հարց 8 Արդյո՞ք դատական ծախսերը զգալիորեն կգերազանցեն վճռով ստանալիքը:

Հաշտարարությունը, որոշ բացառություններով, զգալիորեն մատչելի է, քան արբիտրաժը և դատավարությունը: Այն դեպքերում, երբ դատավարությունը կառաջացնի անհամաչափ ծախս վեճի առարկայի արժեքի համեմատ, հաշտարարության գործընթացը նախընտրելի է: Որքան ավելի փոքր է վեճի արժեքը, այնքան հաշտարարությունն ավելի շատ կարող է օգնել կողմերին վեճն ավելի արագ և խնայողաբար լուծելու հարցում: Փաստաբանի և այլ մասնագետների, օրինակ՝ փորձագետների վճարները կսահմանափակվեն հաշտարարության ծախսերով, քանի որ տվյալ գործընթացն զգալիորեն կարճ է տևում և ավելի կանխատեսելի է:

Հարց 9 Արդյո՞ք կողմերի միջոցները սահմանափակ են դատական ծախսեր կրելու համար:

Որոշ բացառություններով, հաշտարարությունն զգալիորեն մատչելի է, քան դատավարությունը: Հաշտարարությունը շատ դեպքերում կարող է լինել վեճերի լուծման առավել մատչելի ընթացակարգ:

Հարց 10 Մեծ հավանականություն կա, որ դժվար կլինի տվյալ գործով վճիռ կայացնել, և վճիռը բողոքարկվելու է:

Այն դեպքում, երբ ապացույցները պակասում են կամ բացակայում են և կարող են բարդացնել որոշման կայացման գործընթացը, հաշտարարության գործընթացը կարող է կողմերի համար ավելի բարենպաստ ելք ունենալ:

Հաշտարարությունը նախընտրելի է նաև այն դեպքերում, երբ վեճը շատ բարդ է և տեխնիկապես դատավորի համար բարդ է լինելու առանց փորձագետների եզրակացության վճիռ կայացնել: Փորձաքննության հետ կապված ծախսերն ավելանում են դատական ծախսերի գումարին: Ավելին, փորձաքննության արդյունքը հաճախ հանգեցնում է նոր տարաձայնությունների:

Հաշտարար ներգրավելը հնարավորություն է տալիս կողմերին տեխնիկական հարցերի շուրջ քննարկում ծավալել: Դատական գործընթացում սովորաբար կողմերը միմյանց հետ շփվում են միջնորդավորված՝ փաստաբանների միջոցով:

Հարց 11 Անհրաժեշտ է պահպանել վեճի մանրամասների լրիվ գաղտնիություն:

Հաշտարարության ինստիտուտի հիմնական առավելություններից մեկը հաշտարարության հիմքում ընկած գաղտնիության սկզբունքն է: Հաշտարարի վրա դրվում է հաշտարարության գաղտնիությունը պահպանելու պարտականություն:

Գաղտնիությունը հաշտարարության ինստիտուտում ընկալվում է երկու իմաստով՝

- Հաշտության համաձայնության ձեռքբերման համար բանակցությունների գաղտնիություն,
- Հաշտարարության արդյունքում կայացված հաշտության համաձայնության գաղտնիություն:

Հարց 12 Արդյո՞ք վեճի առարկան սկզբունքային հարց է կողմերի (նրանցից մեկի) համար:

Որոշ հայցեր բերվում են զգացմունքային հողի վրա կամ սկզբունքներից դրդված: Նման դեպքերում կողմերին անհրաժեշտ է անհատական մոտեցում, որը հնարավորինս կճանաչի և կհաստատի վեճի հիմքում ընկած սկզբունքը՝ այդպիսով բավարարելով բողոքի բերման իրական դրդապատճառը: Անտեսելու դեպքում կողմը կարող է ունենալ անարդարության կամ պարտության զգացում, անգամ եթե դատարանի որոշումն հօգուտ իրեն է կայացվել: Այսպիսի դեպքերում հաշտարարությունը կարող է ավելի մեծ բավարարվածություն պատճառել:

Հարց 13 Հնարավոր է, որ վեճի առարկան չի արտահայտում կամ մասամբ է արտահայտում տարաձայնության իրական պատճառը:

Բողոքի շրջանակներում դատարանը սահմանափակվում է միայն կողմերի հայցապահանջը քննելով, մինչդեռ հիմնականում լինում են այդ հայցապահանջի հիմքում ընկած պարզ կամ ոչ այդքան պարզ պատճառներ/կարիքներ: Դատարանի կողմից որոշման կայացումից հետո հայցապահանջից դուրս մնացած պատճառները/կարիքները կարող են նոր վեճի առաջացման պատճառ դառնալ:

Հաշտարարությունը չի սահմանափակվում կողմերի ներկայացրած պահանջներով: Հաշտարարը պարտավոր է հասկանալ թաքնված շահերն ու դրանց հետ կապված վեճերը և աջակցել դրանց համակողմանի լուծմանը:

Գ. Կողմերի դիրքորոշումը հաշտարարության նկատմամբ

Հարց 14 Կարևոր է, որ վիճող կողմերը հետագայում լավ հարաբերություններ պահպանեն:

Մրցակցային դատավարությունները գրեթե առանց բացառության խարխլում են գործնական և անձնական հարաբերությունները: Վեճի դատական կարգով քննությունը երբեմն ազդում է նաև երրորդ անձանց հետ հարաբերությունների վրա:

Հաշտարարության դեպքում վիճող կողմերը նստում են մեկ սեղանի շուրջ, քննարկում ծավալում վեճի շուրջ և աշխատում վեճի լուծման փոխշահավետ տարբերակներ մշակելու ուղղությամբ: Արդյունքում, ընթացիկ գործնական կամ անձնական հարաբերությունները պահպանելու կամ վերականգնելու ավելի մեծ հնարավորություն է ստեղծվում:

Հարց 15 Դատարանում քննվող գործի ելքը կողմերի համար բացարձակապես անորոշ է:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձինք չեն սիրում անորոշություն: Նրանց անհրաժեշտ է իրենց ֆինանսների որոշակիություն ներդրումներ կատարելու կամ իրենց բիզնես ռազմավարությունը կանխատեսվող կորուստներին հարմարեցնելու համար: Անորոշությունը կարող է նաև առաջացնել լրացուցիչ սթրես ձեռնարկատիրոջ համար: Այս տեսանկյունից ևս հաշտարարությունն առավել հարմար է:

Հարց 16 Կարևոր է, որ կողմերը կարողանան վերահսկել գործի ելքը:

Հայցադիմում ներկայացնելով՝ կողմերը, վեճի լուծումը հանձնում են դատարանին: Հաշտարարության դեպքում կողմերը վեճի լուծման նկատմամբ պահպանում են իրենց վերահսկողությունը: Հաշտարարության հիմքում ընկած կամավորության սկզբունքը արտահայտվում է նաև նրանում, որ կողմերն ունեն հաշտության համաձայնությունում պայմաններ սահմանելու ազատություն: Նրանք կարող են կատարել ցանկացած առաջարկություն և մերժել մյուս կողմի առաջարկություններն առանց բացատրություններ տալու: Հաշտության համաձայնության մեջ կարող են ընդգրկվել միայն այն պայմանները, որոնց շուրջ կողմերը համաձայնության են եկել:

Հարց 17 Կարևոր է, որ կողմերը վերահսկեն որոշման կայացման ընթացքը և ժամկետները:

Եթե կողմերը ցանկանում են վերահսկել գործընթացը և դրա արագությունը, հաշտարարության կիրառումը նպատակահարմար է:

Հարց 18 Հանրային արդարացումը կարևոր է կողմերի համար:

Կողմերը, որոնք փնտրում են հանրային արդարացում, կարող են ընտրել վեճի կարգավորման ինչպես դատական, այնպես էլ հաշտարարության գործընթացները: Դատարանի որոշումը հրապարակային է և կարող է հանրային արդարացման զգացողություն պատճառել: Հաշտարարությունն, ի տարբերություն, գաղտնի է: Հարկ է նշել, սակայն, որ հաշտարարությունը հնարավորություն է ընձեռում կողմերին համաձայնության գալ հրապարակայնորեն ներողություն խնդրելու կամ համատեղ մամուլի հաղորդագրությունով հանդես գալու շուրջ: Հաշտարարության առավելությունն այն է, որ հրապարակային հայտարարությունը կարող է կազմվել բոլոր կողմերի մասնակցությամբ:

Դ. Հաշտարարության օգտակար ազդեցությունը տվյալ վեճի վրա

Հարց 19 Արդյոք հաշտարարությունը կօգնի՞ կողմերին գտնելու փոխշահավետ լուծում իրավական կարգավորման շրջանակից դուրս:

Հաշտարարության դեպքում օրենքը միայն հղման կետ է: Այն միայն սահմանում է կարգավորման շրջանակը, ուստի կողմերը խիստ անհատականացված համաձայնագրեր

կազմելու հնարավորություն են ստանում, որոնք արտացոլում են բոլոր կողմերի ընդհանուր ըմբռնումը վեճի շուրջ:

Հարց 20 Հավանական է, որ վեճը լուծվի, եթե կողմը/կողմերն ընդունեն իրենց սխալները և ներողություն խնդրեն:

Ներողություն խնդրելը նշանակում է վնասի և պատասխանատվության ճանաչում, ինչպես նաև հետևանքի և սխալների ընդունում: Ներողություն խնդրելը երբեմն անհրաժեշտ է, սակայն շատերը չեն կարողանում հաղթահարել ներողություն խնդրելու պատնեշը: Հաշտարարությունը հնարավորություն է ստեղծում ներողություն խնդրելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Քաղվածք՝ հաշտարարության ոլորտը կարգավորող իրավական ակտերից

«Հավելված 3»-ում նշված են հաշտարարության ոլորտը կարգավորող իրավական ակտերի նորմերը, որոնք վերաբերում են հետևյալին.

- Հաշտարարության իրականացման սահմանափակումները
- Հաշտարարության իրականացման պարտականությունը
- Դատարանի կողմից հաշտարարության նշանակման վերաբերյալ դրույթները
- Հաշտարարական գաղտնիքի վերաբերյալ դրույթները
- Հաշտարարության ժամկետը
- Հաշտարարության նշանակման իրավական հետևանքները
- Հաշտարարության արդյունքով կնքված հաշտության համաձայնության վերաբերյալ դրույթները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (քաղվածք)

(ՀՕ-110-Ն, ընդունման ամսաթիվը 09.02.2018)

Հոդված 156. Գործի քննության հետաձգումը

1. Դատարանն իրավունք ունի հետաձգելու գործի քննությունը, եթե՝

1) …

5) գործին մասնակցող անձանցից որևէ մեկը միջնորդում է տրամադրել ողջամիտ ժամկետ՝ վեճը հաշտությամբ լուծելու համար, և գործին մասնակցող մյուս անձինք չեն առարկում, կամ դատարանը նշանակել է հաշտարարություն.

Հոդված 167. Նախնական դատական նիստում լուծման ենթակա հարցերի շրջանակը

1. Առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում՝

1) …

6) պարզում է՝ հայցվորը պնդում է արդյոք իր պահանջները, պատասխանողն արդյոք ամբողջությամբ կամ մասնակի ընդունում է հայցվորի պահանջները, և գործին մասնակցող անձինք չեն ցանկանում արդյոք կնքել հաշտության համաձայնություն կամ վեճը լուծել հաշտարարության միջոցով՝ պարզաբանելով հաշտարարության էությունը,

3. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված դատավարական գործողությունները կատարելուց հետո դատարանը կարող է նշանակել մինչև չորս ժամ անվճար հաշտարարություն, եթե մեծ է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը:

Հոդված 182. Գործի վարույթը կարճելու հիմքերը

1. Առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

1) …

9) դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը, ներառյալ՝ հաշտարարության արդյունքով կնքված հաշտության համաձայնությունը.

10) հաշտարարության արդյունքով կողմերը կնքել են հաշտության համաձայնություն, որտեղ նշել են առանց հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու գործի վարույթը կարճելու մասին.

Հոդված 184. Հաշտարարության և հաշտարարի նշանակումը

1. Առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանը վարույթի ցանկացած փուլում կողմերին հաշտեցնելու նպատակով նրանց համաձայնությամբ կամ միջնորդությամբ իրավունք ունի նշանակելու արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց:

2. Եթե մեծ է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մեկ անգամ կարող է նշանակել մինչև 4 ժամ անվճար հաշտարարություն:

3. Հաշտարարություն կարող է նշանակվել ինչպես ամբողջ դատական վեճով, այնպես էլ ինքնուրույն պահանջի մասով, եթե այդ մասի առանձին լուծումը հնարավոր է հաշտարարության միջոցով:

4. Հաշտարարություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որտեղ նշվում են գործին մասնակցող անձինք, կողմերի միջև առկա վեճի բնույթը, պահանջները, հաշտարարության ժամկետները, արտոնագրված հաշտարարի անունը, այլ անհրաժեշտ տվյալներ, հաջորդ դատական նիստի ժամանակը և վայրը:

5. Դատարանը նշանակում է կողմերի ընտրած արտոնագրված հաշտարարին, իսկ այն դեպքում, երբ կողմերը չեն ընտրում արտոնագրված հաշտարար, կամ հաշտարարություն նշանակվում է դատարանի նախաձեռնությամբ, ապա հաշտարարին նշանակում է դատարանը: Արտոնագրված հաշտարարը նշանակվում է համապատասխան ոլորտի հաշտարարների ցանկից՝ ըստ ազգանվան այբբենական հերթականության՝ արտոնագրված հաշտարարի մասնագիտացման և ծանրաբեռնվածության աստիճանին համապատասխան: Ամենաքիչ ծանրաբեռնվածություն ունեցող արտոնագրված հաշտարարը, եթե ունի վիճելի իրավահարաբերության համապատասխան ոլորտի մասնագիտացում,ապա ընտրվում է անկախ ազգանվան այբբենական հաջորդականությունից:

6. Հաշտարարություն նշանակելու մասին որոշումը 10-օրյա ժամկետում ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

Հոդված 185. Հաշտարարության ժամկետը

1. Դատարանի նշանակած հաշտարարության սկզբնական ժամկետը չի կարող գերազանցել երեք ամիսը: Կողմերի համատեղ միջնորդությամբ նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն մեկ անգամ՝ մինչև վեց ամիս ժամկետով:

Հոդված 186. Հաշտարարության ավարտը

1. Յուրաքանչյուր կողմ, ինչպես նաև հաշտարարը հաշտարարությունն սկսելուց հետո ցանկացած պահի կարող են դադարեցնել հաշտարարության գործընթացը:

2. Հաշտարարության գործընթացն ավարտվում է կողմերից առնվազն մեկի կամ հաշտարարի կողմից գործընթացը դադարեցնելով կամ հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնություն կնքելու միջոցով:

3. Հաշտության համաձայնություն կնքելու դեպքում մեկական օրինակ տրվում է կողմերին, հաշտարարին, դատարանին:

4. Դատարանի նշանակած հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնություն կնքելու դեպքում արտոնագրված հաշտարարը պարտավոր է հաշտության համաձայնությունն ստորագրելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցել դատարանին՝ կցելով հաշտության համաձայնության բնօրինակը:

5. Եթե հաշտության համաձայնությունում առկա է գաղտնիության վերաբերյալ պայման, որով հաշտարարության կողմերը համաձայնել են առանց հաշտության համաձայնությունը հաստատելու գործը կարճելու վերաբերյալ, ապա արտոնագրված հաշտարարը կողմերի համաձայնությամբ հաշտության համաձայնությունն ստորագրելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է դատարանին վեճը հաշտարարությամբ լուծելու և գաղտնիության պայմանի մասին: Առանց հաշտության համաձայնությունը հաստատելու գործը կարճելու վերաբերյալ միջնորդությունը կողմերը ներկայացնում են համատեղ, իսկ նման միջնորդության բացակայության դեպքում դատարանը շարունակում է գործի քննությունն ընդհատման պահից:

6. Ստանալով հաշտարարի ծանուցումը վեճը հաշտարարությամբ լուծելու մասին՝ սեղմ, բայց ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում դատարանը, սույն օրենսգրքի 151-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, հաստատում կամ մերժում է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը կամ կարճում է գործի վարույթը՝ ապահովելով հաշտարարության գաղտնիությունը:

7. Հաշտարարության արդյունքով կողմերի չհաշտվելու դեպքում դատարանը շարունակում է գործի քննությունն ընդհատման պահից:

Հոդված 187. Հաշտարարության հետ կապված ծախսերի բաշխումը

1. Հաշտության համաձայնություն կնքվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում հաշտարարության հետ կապված ծախսերը կողմերը կրում են հավասարաչափ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:

2. Այն դեպքում, երբ հաշտարարությունը նշանակված է դատարանի կողմից, և կողմերը դատարանի կողմից հաշտարարության համար սահմանված ժամկետում կնքում են հաշտության համաձայնություն, վճարված պետական տուրքը վերադարձվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

3. Եթե կողմերը չեն ներկայացնում արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարի վարձատրության վերաբերյալ ապացույց, ապա դատարանը կողմերի միջև

բաշխում է հաշտարարի վարձատրության գումարը՝ այն բռնագանձելով հօգուտ հաշտարարի:

4. Անկախ գործի ելքից դատական ծախսերը լրիվ կամ մասնակի դրվում են գործին մասնակցող այն անձի վրա, որը դատարանի կողմից անհարգելի ճանաչված պատճառներով հրաժարվել է մասնակցել հաշտարարությանը:

Հոդված 219. Կորպորատիվ վեճով հայցից հրաժարվելը, հաշտության համաձայնությունը և հաշտարարության գործընթացի առանձնահատկությունները

1. ...

3. Կորպորատիվ վեճերով հաշտարարության կողմերը չեն օգտվում գաղտնիության վերաբերյալ պայմանով հաշտության համաձայնություն կնքելու և առանց հաշտության համաձայնությունը դատական կարգով հաստատելու գործի վարույթը կարճելու վերաբերյալ համաձայնություն կայացնելու իրավունքից:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենք (քաղվածք)

(ՀՕ-351-Ն, ընդունման ամսաթիվը 13.06.2018թ.)

Հոդված 2. Հաշտարարությունը

1. ...

2. Հաշտարարություն կարող է իրականացվել քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ իրավահարաբերություններից բխող վեճերով:

3. ...

4. Կողմերի միջև հաշտարարության վերաբերյալ համաձայնության առկայության դեպքում վեճը կարող է հանձնվել դատարանի քննությանը հաշտարարությունն ավարտելուց հետո:

Հոդված 7. Հաշտարարության ընթացքում հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը

1. Հաշտարարության ընթացքում բացահայտված կամ արտահայտած տեղեկությունները գաղտնի են և կարող են հրապարակվել կողմերի գրավոր համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Հաշտարարը, կողմերը կամ հաշտարարությանը մասնակցած կամ մասնակցող յուրաքանչյուր անձ չեն կարող հարցաքննվել որպես վկա այն տեղեկությունների վերաբերյալ, որոնք իրենց հայտնի են դարձել հաշտարարության ընթացքում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի:

«Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և

փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ (քաղվածք)

(Հասանելի է հետևյալ հղումով՝
http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=66741)

Հոդված 1. «Հաշտարարության մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-351-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր 2.1-ին մաս.

«2.1 Ամուսնալուծության, երեխայի բնակության վայրի որոշման, ալիմենտի (ապրուստավճար) բռնագանձման, ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման, ծնողական իրավունքների իրականացման, երեխայի մերձավոր ազգականների՝ երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու, երեխայի տեսակցության կարգ սահմանելու, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ գործերով նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացումը պարտադիր է»:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 7. Հաշտարարական գաղտնիքը

1. Հաշտարարը պարտավոր է պահպանել հաշտարարական գաղտնիքը: Հաշտարարական գաղտնիք են հաշտարարության ընթացքում բացահայտված կամ արտահայտած տեղեկությունները, հաշտարարության բովանդակությունն ու բնույթը: Հաշտարարական գաղտնիքը կարող է հրապարակվել օրենքով նախատեսված դեպքերում:

2. Հաշտարարը կարող է հրապարակել հաշտարարական գաղտնիքը, եթե՝

1) առկա է կողմերի գրավոր համաձայնությունը,

2) դա անհրաժեշտ է քրեական կամ կարգապահական վարույթում իր պաշտպանության համար.

3) առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն:

3. Հաշտարարական գաղտնիքի պահպանման պարտականությունը չի սահմանափակվում ժամանակի մեջ և տարածվում է նաեւ որպես հաշտարար գործունեությունը կասեցված կամ դադարեցված անձի նկատմամբ»:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Գրականության ցանկ հետագա ընթերցման համար

1. Referral to Mediation: A Practical Guide for an Effective Mediation Proposal by Machteld Pel (1 April 2008)
2. Mediation: Practice, Policy, and Ethics, by Professor Carrie J Menkel-Meadow, Professor Lela Porter Love, et al. (24 Jan 2006)
3. Հաշտարարության զարգացման գործիքակազմ. Հաշտարարության վերաբերյալ ԱԱԵՀ-ի ուղենիշների ապահովում. Հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/cepej-2018-7-toolkit-en-rev-armenian-2751-9963-4181-v-1/1680a4907c